ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/37590-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (ԽՍ-219-07.07.2019-ՖՎ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-219-07.07.2019-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի նախագծով առաջարկվում է տարանջատել ավանդատուներին՝ ըստ ռեզիդենտության, և ոչ ռեզիդենտ ավանդատուների համար երաշխավորված ավանդի չափը սահմանել ավելին, քան ռեզիդենտ ավանդատուներինը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է օրենքի նախագծում քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով ստորև ներկայացված հանգամանքները.

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) համաձայն՝ երաշխավորում է ֆիզիկական անձանց բանկային ավանդները՝ անկախ նրանց ռեզիդենտության կամ քաղաքացիության չափանիշից: Օրենքը մշակվել է միջազգային լավագույն փորձի և միջազգայնորեն ճանաչված՝ Ավանդները երաշխավորողների միջազգային ասոցիացիայի և Բազելյան կոմիտեի կողմից համատեղ մշակված՝ Արդյունավետ ավանդների երաշխավորման համակարգի հիմնարար սկզբունքների հիման վրա:

Վկայակոչված հիմնարար սկզբունքների 8-րդ սկզբունքը (Principle 8 Coverage) ամրագրում է, որ երաշխավորված ավանդների ծածկույթը չպետք է տարբերվի՝ պայմանավորված ավանդատուի ռեզիդենտությունից կամ քաղաքացիությունից:

Վկայակոչված սկզբունքը Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի անկյունաքարերից է և նպատակ ունի ապահովելու ֆինանսական համակարգից օգտվող սպառողների շահերի պաշտպանությունը՝ հավասարության սկզբունքի հիման վրա: Մինչդեռ, օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումը տարբերակված և նույնիսկ խտրական մոտեցում է նախատեսում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ավանդատուների նկատմամբ՝ նախապատվությունը տալով ոչ ռեզիդենտ ավանդատուներին:

Բացի այդ անձի նկատմամբ տարբերակված, խտրական վերաբերմունքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքո-

որոշումներից (Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2019 թվականի փետրվարի 12-ի ՍԴՈ-1443, 2015 թվականի հուլիսի 7-ի ՍԴՈ-1224, 2008 թվականի ՍԴՈ-731 որոշումներ)՝ հանգում ենք հետևյալին՝

- պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները.

- Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից:

Նմանատիպ իրավական դիրքորոշումներ հայտնել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (տես, մասնավորապես, Stec and Others v. the United Kingdom [GC], nos. 65731/01 and 65900/01, § 51, ECHR 2006-VI ¨ Carson and Others v. the United Kingdom [GC], no. 42184/05, ECHR 2010).

- խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես, նրանք զրկվում են այս կամ այն իրավունք-ներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (ՍԴՈ-1224):

Ելնելով շարադրվածից՝ հայտնում ենք, որ առանց օբյեկտիվ և ողջամիտ չափանիշի ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ավանդատուների համար երաշխավորված ավանդների տարբեր չափեր սահմանելը չի կարող հիմնավորված համարվել:

Հարկ ենք համարում նաև նշել, որ, անկախ ամեն ինչից, օրենքի նախագծով հիմնավորված չէ այն դատողությունը, ըստ որի՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից ներդրված ավանդների երաշխավորման չափերի բարձրացումն ակնհայտորեն կհանգեցնի այդ անձանց կողմից ավանդ ներդնելուն: Այսինքն՝ օրենքի նախագծով ուսումնասիրված և գնահատված չէ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության

բանկերում ավանդ ներդնելու վարքագիծը՝ կախված երաշխավորման չափերից: Հաշվի առնելով այն, որ, օրինակ, պետության կողմից ամբողջովին երաշխավորված պետական պարտատոմսերի պարագայում առկա չէ ոչ ռեզիդենտ անձանց կողմից նշված պարտատոմսերի նկատմամբ առանձնապես ակտիվ պահանջարկ: Ընդ որում, կարծում ենք, որ առաջարկվող կարգավորումն իր «խտրական» տարրով կարժանանա ռեզիդենտ անձանց բացասական արձագանքին և կարող է հակախթան հանդիսանալ այդ անձանց կողմից ավանդի ներդրման շահագրգռվածության հարցում և դրանով իսկ՝ խոչընդոտ հանդիսանալ՝ ներքին խնայողությունները ներդրումների վերածելու տեսանկյունից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2019 թվականի N 1120 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-219-07.07.2019-ՖՎ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 14
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-219-09.07.2019-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-142-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի (ա), (բ), (գ), (դ) կետերում «ավանդատուն» բառից առաջ ավելացնել «ռեզիդենտ» բառը:

2. Նույն մասի (դ) կետի վերջակետը փոխարինել միջակետով:

3. Նույն մասը լրացնել նոր (ե), (զ), (է), (ը) կետերով.

«ե) եթե ոչ ռեզիդենտ ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնհինգ միլիոն հայկական դրամ է.

զ) եթե ոչ ռեզիդենտ ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է.

է) եթե ոչ ռեզիդենտ ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ դրամային բանկային ավանդի գումարը տասը միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչեւ տասնհինգ միլիոն հայկական դրամով.

ը) եթե ոչ ռեզիդենտ ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային եւ արտարժութային բանկային ավանդներ, եւ նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է տասը միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժութային բանկային ավանդը՝ տասը միլիոն դրամի եւ հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:»:

4. Նույն հոդվածը լրացնել նոր 1.1-ին կետով.

«1.1. Սույն հոդված 1-ին մասի իմաստով՝ ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք են համարվում «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ավանդների երաշխավության համակարգը բավական կարեւոր գործիք է բանկային համակարգի հուսալիության տեսանկյունից, միեւնույն ժամանակ այն հանդիսանում է կարեւորագույն գործոն ավանդ ներգրավելու համար: Դրա շնորհիվ է նաեւ, որ վերջին տարիներին նկատվում է ավանդների աճ առեւտրային բանկերում:

Գաղտնիք չէ, որ սփյուռքում բնակվող մեր որոշ հայրենակիցներ, ցանկանալով Հայաստանում փոքր ներդրում կատարել, ընտրում են ամենապարզ մոդելը՝ ավանդ ներդնել առեւտրային բանկերում: Ֆինանսական այլ գործիքների թերզարգացածությունը եւ ավելի բարձր ռիսկայնությունը հնարավորություն չի տալիս ընտրել ներդրումների այլ եղանակներ:

Այս համատեքստում նպատակահարմար է ավելացնել ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար ավանդների երաշխավորության չափերը, քանի որ նրանք, հիմնականում չբնակվելով Հայաստանում, ունեն ավելի սահմանափակ տեղեկություն բանկային համակարգի եւ հնարավոր ռիսկերի վերաբերյալ, հետեւաբար ավանդ ներդնելու մասով գրեթե ամբողջությամբ վստահում են ավանդների երաշխավորության համակարգին:

Առաջարկվում է դրամով ավանդների համար սահմանել 15 մլն ՀՀ դրամ, արտարժույթով ավանդների համար՝ 10 մլն ՀՀ դրամ երաշխավորված ավանդի չափ:

Այս փոփոխությունը կարող է դառնալ սփյուռքի կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը մասնակցելու խթան, ինչպես նաեւ բարձրացնել բանկային համակարգի նկատմամբ գրավչությունն օտարերկրացիների մոտ՝ հաշվի առնելով նաեւ, որ ոչ ռեզիդենտների խնայողություններն էականորեն ավելի մեծ են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խնայողություններից եւ առկա երաշխավորության չափերից: